ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2013 թվականի N132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱԿԱՏԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 21-ի «2013 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» N54-Ա որոշման 1-ին կետի, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ճակատեն գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2013 թվականի դեկտեմբերի 8-ին:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման օրն է 2014 թվականի փետրվարի 23-ը:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. սեպտեմբերի 17
ք. Կապան